

ՄՇԱԿ

Ցարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՄԵՆԵԱՆ ՄԻՋԵԱՆՑ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԻՋԵԱՆՑԻ

մահը, խնդրում է բարեկամներին և ծանօթներին շնորհ բերել յուզարկաւորութեանը, որ լինելու է իր բնակարանից, Նիկոլայի փողոց, № 19, դէպի Կոկիայի ս. Աստուածածին եկեղեցին, և այնտեղից խօսիվաքը, շաբաթ օր, փետրվարի 26-ին, առաւօտեան 10 ժամին, Հոգեհանգիստը կը կատարվի ուրբաթ օր, երեկոյեան 6 ժամին:

(№ 22) 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընտրողական գործը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. ՊՅՐԻՆ. Նայոց թատրոն. Մի նշանաւոր գիրք. Նամակ խորհուրդի. Նամակ բազմա. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց. Հայաստանից. Հայոց և թիւրքաց զորացիները թիւրքիստում. Անգլիկան միաբնակութիւնների ասորիների մէջ. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻԿԱՆ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԳՐՈՐԾ

Ընտրութիւններ թիֆլիսում, ընտրութիւններ Շուշում, ընտրութիւններ Բաղուում, Ախալցխայում և այլն. ընտրութիւնների համար պատրաստութիւններ, համալսարաններ, ընտրողական ճանքեր, վեճեր, խառնուրդներ և ընդհանրապէս ամեն տեղ.—աչաք վերջին ժամանակների խօսակցութեան և հետաքրքրութեան գլխաւոր նիւթերից մէկը մեզանում:

Ընտրողական գործը ստացել է մի առանձին նշանակութիւն և գրաւել հասարակութեան խորին ուշադրութիւնը: Մենք մի տեսակ ընտրողական շրջանի մէջ ենք մտել, փորձ փորձելով ընտրութիւնների միջոցով ազդել հասարակական գործերի վրա, հետաքննելով անգործ խառնակիչ, կամ միաստիակ գործիչներին և հրաւիրելով ազնիւ գործունէութեան յոյսեր տուող թարմ ոյժեր:

Այն գիտակցական վերաբերմունքը, որ ստացել է ընտրողական գործը, պէտք է բնականաբար յարուցանէր խիստ քննադատութիւն, անխնայ պահանջներ գործողներից և իրաւունքներին սահմանների որոշման խնդիրներ: Արդէն շատ տեղ առաջ են եկել կնճռոտ հարցեր, որոնք սպասում են պատասխանի և բողոքներ ու տարաձայնութիւններ են լսվում ընտրութիւնների օրինական, ապօրէն լինելու, կամ իրաւաստութիւնների սահմանների մասին: Անկասկած է, որ ընտրութեան կանոնաւորութեան խնդիրը ստիպողական կերպով կը պահանջի իր բաւարար լուծումը և ձեռնհաս հաստատութիւնները պարտաւորութիւն կը դրան որոշակի և ճիշդ կանոններ տալու: Թիւրքիստանի ընտրութիւնների առաջն առնելու համար:

Ընտրողական գործի միւս մասը կազմում է նրա գաղափարական մասը. նրա նորադրոյն հետաքրքրութիւն և հրապրող նրանում է, որ հասարակութեան թարմ, անկաշառ, առաջադիմական ոյժերը սկսում են այնքան ազդեցիկ դեր կատարել, որ կարողանում են ոչ միայն զսպել հին աղայականութեան սովոր անձանց, այլ և աշող փորձեր են անում գլուխ կանգնելու ընտրութեան գործին՝ տալով նրան ցանկալի ընթացք: Այդ նորադրոյն ոյժը մի մեծ խոչընդոտ, մի աչքի փուշ է դարձել հին ընտրեալների համար, որոնք տարիներ շարունակ իրանց ձեռքին են ունեցել հասարակական գործերը և վարել նրանց, ինչպէս ցանկացել են, առանց հակողութեան, առանց հաշտութեան և իւրաքանչիւր բողոքող ձայնի վրա նայել են արհամարհանքով՝ այն հաստատ յուսով ու հաւատով թէ նրանց մենավաճառական գործա-

վարութեան ժամանակամիջոցը անվերջ է: Հին, անկարգ ձեռք սովոր գործիչները, ի հարկէ, անբաւական են ընտրողների արթնացած գիտակցութիւնից, որովհետեւ մինչև այդ նրանք նեղ, մասնաւոր շրջանում, միմեանց մէջ վճռում էին զանազան խնդիրներ, ընտրում էին ընտանեացի այս կամ այն անձին հոգաբարձու, զանազան ջարտուղար և այլն: Իսկ այժմ ժողովուրդը այլ ևս չէ հաւատում իր նախնի ներկայացուցիչներին և կամենում է ինքը ի մօտը ծանօթանալ հանգամանքներին և տեղի հանդիսանալ հասարակական գործերին:

Ճիշդ է, դեռ կատարեալ կազմակերպութիւն չունի նոր ոյժը, բայց նրա մէջ ուժեղ է ճշմարտութեան, ազնւութեան, անկաշառ վերաբերութեան, աներկիւզ արտով բողոքելու զգայունքը: Տարիների ընթացքում առանձին առանձին անբաւականութիւններ, բողոքներ, ստացած վիրաւորանքները, պարտատեղ են մի արամադրութիւն, որ այժմ կարող է զգուշ իրան սուր արտայայտութիւնով երևան հանել իր գոյութիւնը. դա է որ կարծես չեղած տեղից, կարճ ժամանակամիջոցում, առաջացնում է կազմակերպութիւններ, որոնց գոյութիւնը ոչ ոք չէր ենթադրում անգամ:

Ընտրողական գործի այս նոր շրջանին վերաբերվելով ամենամեծ համակարգութեամբ, կարևոր և անհրաժեշտ ենք դատում սակայն շեշտել, որ նա դեռ հաստատուն և ամուր գրութիւն չէ ստացել և կարօտ է ամենաուշադիր հոգատարութեան, որպէս զի նա կանգ չառնի, ազատ լինի սխալներից, շարունակի մեծացնել իր ասպարէզը:

Հարկաւոր է ամենաուշադիր ուշադրութիւն, անխնայ աշխատանք, որպէս զի հին կարգերի և գործիչների դէմ բողոքողների դատը տանի իր յաղթանակը և իսկապէս առաջադիմական հոսանքը կլանի իր մէջ ժողովրդական կեանքի արտայայտութիւնները: Պէտք է ապացուցել իր տալ հասարակութեանը, որ թարմ առաջադէմ երիտասարդութիւնը կարող է աշողութեամբ առաջ տանել հասարակական գործերը. որ նա ոչ միայն իրենցինքն և ձգտումներն առնելից է միայն խօսում, այլ և նրանց կամայ կամայ իրագործում է կեանքի մէջ, որ նա ոչ միայն ընտրել և ընտրվել գիտէ, այլ և ընտրվելուց յետոյ գործել անընդձեռն եռանդով և մեծ հետևողականութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՅՐԻՆ ՈՃԸ

Այժմեան տաճկական լիզու և գրականութիւնը, որ իր արաբերէնից և պարսկերէնից առած փոխառութիւններով չափազանց ձուլացած է, կատարելապէս անծանօթ է Կովկասի հայերին, ուստի դէժ մի գաղափար տալու համար այդ լիզուի ոճի մասին, աւելորդ չը համարեցինք թուրք բնագրից թարգմանելով ընթերցողներին ներկայացնել մի գեղեցիկաբար ոճով յօդուած գրութիւն, որը և միանգամայն ցոյց է տալիս թէ ինչ տեսակ բարձր է տիրում Կ. Պյուրին: Այս գրութիւնն է խորէն պատրիարք Ալեքե-

նի՝ նորերումս սուլթանին մատուցած ուղերձը, որով հայոց պատրիարքը յանուն ազգի շնորհալուրթիւն է յայտնում խօշորայի բարձման համար սուլթան Համիդ Բ.-ի տաճած խնամքի մասին:

Ահա այն ուղերձի բառացի թարգմանութիւնը: «Բարձրաշին Աստուած թող մինչև դարերի վերջը՝ կատարեալ առողջութեամբ և մարմնոյ զօրութեամբ իր թագաւորական շքեղապան զաւի վրա մշտապէս և հաստատ պահէ մեր անբախտապահանք մեծ բարեբար Տէր Ալեքսի աշխարհօգուտ անձը, որի ծառայապաշտպան մեծահոգութեան ղեղավարութիւնը աշխարհիս և աշխարհայիններէս կեանքն է և նրանց առողջութեան դարմանը, թող նա (Աստուած) թագաւորական բոլոր երկիրներումը և քաղաքներումը էլ աղէտները, ախտերը, և ցաւերը ջնջէ և անհետացնէ, ամէն»:

«Բարձրաշին Աստուածային գաղանկաւոր մեծ թագաւորութեանը մայրաքաղաքում երեցող և տիրող խօշորայ համաճարակ ախտի ոչնչանալու ու հեռանալու թէ՛ն Աստուծոյ օգնութեամբ ու ողորմութեամբ հետեանքն է, բայց այն գիտական և առողջապահական միջոցները, որ Աստուածային շուքից զմառաւ հրամաններով և թագաւորական շնորհաբաշխ պատուէրների համաձայն, առանց ժամանակ կորցնելու ձեռք առնելուցան և գործողութեան խօշորայի տարածումը արգելելու, ոչնչացնելու և ախտացեալները բժշկելու մասին,—երախտապարտ և շնորհալուրթեան պարտական են կայացուցած բոլոր հպատակները: Այժմ ժամանակ ենք միմեանց ծառայող ծառայողներ: Այժմ մի ժամանակ և ոչ մի տեղ երբեք տեսնված չէ, որ այդքան բարձր հոգածութիւն, այդքան անընդհատ խնամք ցոյց արուին և բնաւ ոչինչ չը խնայվի, և այս՝ իրաւամբ բովանդակ աշխարհի և աշխարհայիններին հիացումն է պատճառած»:

«Վեր ամենապարտ և ամենախնամ հայրը, գովել յատկութիւնով օծոված փառքիւնը և ծովաչափ առատօրէն ընծայող Դարինշահը, որ իր արքայական երկրի և հպատակների ծաղկման և երջանկացման նկատմամբ ցոյց տուած անչափ կենսապաշտպան շնորհներով և ողորմութիւններով և բոլորի կողմից երախտապարտական հայեացքով ընդունված բազմաթիւ բարի գործերով, ու փառաւոր արարութեանը գերազանցած է իր մեծագոյն նախնիներին, իր արքայական ողորմածութեամբ և գովութեամբ անմիջապէս օգնութեան է հանում այնտեղ, որտեղ վտանգ և աղէտ է պատահում. այսպէս էլ ինչպէս խօշորայ հիւանդութեան տարածման և շարունակութեանը դէմ աշխարհապահապան արքայից կատարած բարձր գործերու և տաճած խնամքներու համար՝ մեծութեանը շնորհներին և ողորմութեանը արժանացած հայ հաւատարիմ հպատակ ծառայող էլ, ի միջի այլոց, կատարեալապէս անկարող են իրանց շնորհալուրթիւնն ու երախտապարտութիւնը արտայայտել և այս տրուպ ստրուկիս (պատրիարքի) անարժան միջնորդութիւնով, այս առթիւ էլ համարձակվում են ներկայացնել արքայից Արքայից փառահեղ ոտանոցին այն բարի աղօթքները, որով հայերը արտի կատարեալ անկեղծութեամբ խնդրում են Ներկաւոր Տէրից որ թագաւորական փառքը, բախտը և կեանքից օրերը անհն և աւելանան, և երկրաւորական (արքայական) բոլոր յոյսերը և բաղձանքները աստուածային յաջողութեան մերձ և արժանի լինեն:—Այս մասին և ամէն հանգամանքում՝ պատուէր, հրաման և շնորհաբաշխութիւն՝ մեր փառապանք, հղօր և վերին սատիճանի ողորմած տէր թագաւորին են պատկանում»:

Ա. Սարախանեան

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, ամիս 21-ին, հայ դերասանական խումբը արքունական թատրոնում ներկայացրեց

մեր շնորհալի կօմիկ Տէր-Գալսեանի բէնէֆիսին «Թորոսեանի ճանապարհորդութիւնը» վերնագրով կօմիկիան, որը Սարգիսի պիէսաներիցն է և հայ բեմի համար փոխադրել ու յարմարեցրել է Յ. Տէր-Յովհաննիսեան: Պիէսայի նպատակն է ապացուցանել հետեւալ բարոյական միտքը. մարդիկ մեղ ատում են, երբ բարեբարված են մեզանից և ընդհակառակն՝ սիրում են մեղ, երբ բարեբար են հանդիսացել իրանց: Բովանդակութիւնը հետեւեալն է. հարուստ աստիճանաւոր Թորոսեան (Տէր-Գալսեան) ճանապարհորդութիւն է անում Եւրոպայում իր կնոջ և ջահիլ աղջկայ հետ, որի վրա սիրահարված են երկու երիտասարդներ՝ Ռաֆայէլեան (Աղայեան) և Վարդգէսեան (Արեւեան): Այդ երիտասարդները իրանց մէջ պայման են դնում ազնուաբար մրցել միմեանց հետ. եթէ միւրը կարողացաւ գրաւել գեղեցիկուհու սիրտը ու տանել յաղթութիւնը, միւրը՝ յաղթվածը պարտաւոր է յօժարակամ աղիկ տալ: Երիտասարդները հետեւում են Թորոսեանի ընտանիքին նրա ճանապարհորդութեան միջոցին: Ռաֆայէլեանը առիթ է ունենում փրկել ծերունի Թորոսեանի կեանքը Եւրոպայում, երբ նա ձիուց ընկնում է մի ձորի մէջ. իսկ Վարդգէսեանը, տեսնելով որ այդ հանգամանքը, այն է աղջկայ հօր կեանքը վտանգից ազատելը նախամեծարութիւն է տալիս իր մրցակցին աղջկայ և մօր աչքում և նկատելով Թորոսեանի այն պակասութիւնը, որ նա չառ էլ չէ սիրում, երբ յիշեցնում են նրան Ռաֆայէլեանի արած բարեբարութիւնը, այլ նա աւելի սիրով խօսում է իր արած բարութիւնների մասին, դիտմամբ առիթ է տալիս Թորոսեանին փառքներ իր այդ յատկութիւնը: Վարդգէսեանը Արեւեան սարերի վրա շրջապայիս, դիտմամբ ընկնում է մի փոքր փոսի մէջ և առիթ է տալիս Թորոսեանին աղատելու իրան: Այդ վայրկեանից նա դառնում է Թորոսեանի ամենասիրելին, իսկ Ռաֆայէլեանը նրա աչքին փուշ է դառնում: Սակայն աղջկայ և մօր համակրութիւնը Ռաֆայէլեանի կողմն է և դուրս նրան շնորհվեց ստանալ աղջկայ ձեռքը, եթէ Վարդգէսեանը մի օր չը պատմէր Ռաֆայէլեանին իր արարքը և չը ծաղրէր Թորոսեանի յիմարութիւնը: Վերջինս պատահմամբ ականջ դնելով և լսելով երկու բարեկամների խօսակցութիւնը, Վարդգէսեանին պատժելու համար, ընդունում է Ռաֆայէլեանի առաջարկութիւնը: Պիէսայում կան և կողմնակի անձնաւորութիւններ, ինչպէս իշխան Դաւիթեանը (Պետրոսեան) և այլն, բայց նրանք ոչ մի կապ չունեն բովանդակութեան հետ և բերված են միայն պիէսան աւելի ծիծաղելի և գուրաբայի շինելու համար: Թորոսեանի բաւական ծիծաղաշարժ դերը գեղեցիկ կերպով կատարեց Տէր-Գալսեանը, կրկին անգամ ապացուցանելով, որ կօմիկական դերերում նրա տաղանդի ոյժը չէ նուազում: Արեւեան և Պետրոսեան կատարեցին իրանց դերերը այնքան, որքան թող էր տալիս նրանց պիէսան, որի գլխաւոր արժանատիւութիւնը Թորոսեանի դերի պատկերացման մէջն է կայանում. մնացած տիպերը բաւական անգոյն են և թղթ:

Ի հարկէ, ոչ պիէսան, այլ Տէր-Գալսեանի բէնէֆիսը կարողացել էր գրաւել մեծ բազմութիւն, այնպէս որ թատրոնը գրեթէ լի էր:

ՄԻ ՆՇԱՆԱՌՈՐ ԳԻՌԳ

Ամերիկայի Չիկագօ քաղաքի ցուցահանդէսի ժամանակ կայացած կրօնների համալուծար ժողովի, կամ ինչպէս կոչում էին «կրօնների պարլամէնտի» նախաձեռնող և կազմակերպող ձօն չնրին Բարբօլս վարդապետը բառարարակ է այդ ժողովի տեղեկագիրը, որ հաղկացած է 1600 էջերից և 300 պատկերներով:

Այդ հսկայական աշխատութիւնը, մի անգլիական լրագրի տակով, երբ և իցէ աշխարհումս մամուլի տակից դուրս եկած ամենանշանաւոր գրքերից մինն է: Գրքի վերնագիրն է «Ա չիւս ր»

հի կրօնները պարզապէս և բազմա-
ցած է 5 մասերից: Առաջարկի մէջ՝ խօսելով
այն մասին, որ երկու անձնաւորութիւններ մե-
ծեցին մասնակցել պարլամենտին, այն է կէնսա-
բերի արեւելահայկազները և սուլթան Զամիդը, ո-
րոնց պատկերները միասին են դրված, հեղի-
նակը ասում է, «Ժողովի նախագահը շատ զար-
մացաւ խմանալով, որ Թուրքիայի սուլթանը
յայտնապէս ընդդիմացել է ժողովի գումարման, մի
հանգամանք, որ շատ նեղ դրութեան մէջ գցեց
օսմանեան կայսրութեան յոյն և հայ եկեղեցիներ-
ի պետերին: Բայց աշխարհը առաջադիմում է
և երկու կրօնական պետերի veto-ն չը կարողա-
ցաւ արգելել պարլամենտի նախագահին ընդունել
խորհրդակցական յորդորներ անգլիական, ֆրանսիա-
կան, գերմանական, իտալական, սպանիական,
յունական, հայկական, չեխական, չինական, եւ-
պոնական և հնդկական լեզուներով»:

Ամենահետաքրքրականը երկրորդ մասն է, որ-
տեղ հեղինակը ամփոփում է ժողովի մէջ յարուց-
ված և յաջված մեծ խնդիրները՝ Աստուծո, մարդ-
կային բնութեան, կրօնի նշանակութեան, կրօնա-
կան սխառեմներին, նուիրական գրքերի, ընտանե-
կան կենսութեան, կրօնների հիմնադրւոյն, կրօնի
առ գիտութիւնը բարոյականութիւնը և ժամա-
նակակից սոցիալական խնդիրները ունեցած յա-
րաբերութեան, քրիստոնէութեան ներկայ վիճակի,
քրիստոնէական միութեան, մարդկութեան կրօ-
նական միութեան և մի կատարեալ կրօնի տա-
րեքի մասին:

Պատկերները թուով դետաղված են և մի քանի
հայերի՝ իրենցան Զարկի, Աշքեան պատրիարքի,
Մկրատ Զեքիայի, այլ և էջմիածնի, երուսաղէմի
վանքի պատկերները: Գրքի գինը անհամեմատ է-
ման է, այն է 20 շիլլինգ:

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Փետրվարի 12-ին

Երկար պատրաստութիւններից յետոյ, վերջա-
պէս հայ և վրացի ուսանողները, ձեռք ձեռքի
տուած, փետրվարի 9-ին գլուխ բերեցին խորհո-
ւում կողմնակցական և երկու ուղիով: Որովհետեւ
այդ երկու ուղիով առաջին և 2-րդ պէտք է
լինի վերջինը, ուրեմն հարկաւոր էր ամեն ջանք
թափել, որ հասարակութիւնը գոհ մնար: Ուսա-
նողների ջանքը իրար չանցաւ: Երկու ուղիով ծրա-
գիրը կազմած էր բաւական հետաքրքիր. հրա-
ւիրված էին Պետրոսյանից վրաց երգչի Բալան-
չիվաձէ և Մոսկովայից՝ հայ երգչի Կոստանեանց:
պատրաստված էին հայոց և վրաց աղջկային
զգեստներ:

Փետրվարի 9-ին դրամատիկական թատրոնը հան-
դիսաւոր կերպարանք էր ստացել: Թատրոնի ֆո-
նէն գեղեցիկ կերպով զարդարված էր արեւելեան
ճաշակով: Երեկոյան ժամը 8-ին հասարակութիւ-
նը սկսեց լցնել թատրոնի դահլիճը: Երեկոյին
բացեց երգչերի խումբը, որը բաղկացած էր 40
հոգուց և բոլորը հայոց և վրաց աղջկային զգեստ-
ներով: Խումբը այդ երեկոյ երգեց երեք հայոց
երգ՝ «Լուրիկ», «Չամբան անցաւ» և «Զէյթունցոյց
երգը», և երեք վրացերէն երգ: Հասարակութիւնը
շատ հաւանեց պ. Կոստանեանցին, մասնաւորա-
պէս իր բաժանմունքում նրա երգած «Կոստանի»: Պարտի-
կանը ստիպված էր «Կոստանի» երգել հասարա-
կութեան խնդրելով նաև երկրորդ բաժանմուն-
քում վատ չերգեց պ. Բալանչիվաձէ իր յորինած
երգերը: Բացի պ. Կոստանեանցից և Բալանչիվա-
ձէից, երեկոյին մասնակցում էին դրամատիկական
թատրոնի գերասանուհի տ. Բիբիկանյան, Փա-
նէնչիւն, որը գեղեցիկ կերպով բոլորի վրա կա-
տարեց Կորդանեանի «Армянская республ.» և
Բուրնիշտէնի «Էդգինկա», և Թիֆլիսի յայտ-
նի պ. Ֆորկատտին: Երեկոյին մասնակցեց նաև
օրվեստը, որը շատ լաւ կատարեց Կորդանեանի
«Բայաթին»:

Դրվեցին նաև երկու կենդանի պատկերներ.
մէկը հայոց կենսական ինչպէս մեր օրերը Օրթա-
նաւում քեֆ են անում սաղմոսարարով միւսը վրաց
պատմական կենսական ինչպէս խորհրդով: Դրո-
շակակիր երգարները մայրը, տեսնելով որ իր երկու
որդիքը ընկած են, իսկ երրորդը մահաւոր է վի-
րաւորված է, վաղում է գէպի դրօշակը, որ նա
չընկնի թշնամու ձեռքը:

Երկրորդ պատկերից յետոյ վարագոյրը նորից
բարձրացաւ. բեմի վրա ծաղկապատիկ նստել են,
աղջկային զգեստներով, 50 երիտասարդներ: Բեմ

դուրս եկաւ զուգահեռներ խումբը, որին հետե-
ւում էին մի քանի կինուներ. սրանք բոլորն էլ
ծաղկապատիկ նստեցին, բացի մի կինուց, որը
առաջ է գալիս և պարում է «Կինուներ» պա-
րը: «Կինուներ» հետեց լեզուներով խանչալի-
րով: Վարագոյրն իջաւ: Այսպէս երեք պատկեր-
ներ, որի ժամանակ չը մոռացվեց և լեզուներով
կան: Երեք պատկերի ժամանակ վարագոյրը
նորից բարձրացաւ և հասարակութեան երկայն
հետեւալ տեսարանը, ահա հետեւում երեւում են
Մեծ և Փոքր Արարատները, իսկ ստորոտում շին-
ված է (մի քիչ իրականութիւնից հեռու, բայց
այս անգամ ներքին) մի կինուի խանութ այսպի-
սի վերնագրով՝ «Нѣ уезжай голупчикъ мой»:
Կէս գիշերից բաւական անց էր, երբ հասարա-
կութիւնը սկսեց ցրվել:

Տ.

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՑ

Փետրվարի 20-ին

Երէկ, ամսին 19-ին, կրօնի դահլիճում կայա-
ցաւ «հայկական» երեկոյի՝ յօգուտ Մարգարիտա-
կան ընկերութեան գրադարանի, մի սովորական
երեկոյի, որ ամեն տարի տեղի է ունենում:
Վրացիներից օրինակ առնելով, հայերը այս
տարի ևս ջանք էին դրած դրել հետաքրքիր և բազ-
մակողմանի դարձնելու երեկոյին: Խաղաղին «Կի-
նու» ստեղծող իրեն է՝ և «Որթնաձայն» քեֆը, նոր
սիրողների մասնակցութեամբ: Ներկայացուցին
բից յետոյ բեմի վրա տեղի ունեցաւ հայկական
«Երեկոյ» 10—12 հոգի կին և մարդ, Աստուծոյ
հագուստներով, շուրջ բոլորած պարում և եր-
գում էին: Տպագրութիւնը այնքան լաւ, խաղի
այնքան աշուղ էր, որ հասարակութիւնը բոլոր
ծափահարութիւններով մի քանի անգամ կրկնե-
տուեց:

Յետոյ սկսվեցին պարերը: Եւրոպական պարե-
րին բաւականաչափ մասնակցողներ կային. լեզ-
գիկան էր միայն, որ մի երկու դուգի էր վերա-
պահված, այն էլ զլեւաւորապէս վրացիների: Պա-
րերը ընդհատվում էին երբեմնապէս կենդանի
պատկերներով, որ տեղի էին ունենում շքեղ
պարագաներով և սպասածից աւելի աշուղ-
ութեամբ:

«Երեկոյ»-ին յատուկ հրաւերով ներկայ էր
և աշուղ Ջիւանին իր խմբակով: Կային սազան-
դարներ և մուրիկա:

Երեկոյին հաջորդեցին երեք հաւաքված.
դեռ երեք օր առաջ բոլոր սոմսակները վաճառ-
ված էին արդէն. ստիպված էին 200 տոմսակ էլ
նորից աւելացնել կանգնելու համար: Ոչ դահլի-
ճում և ոչ կողքի սենեակներում չարժեքաւ տեղ
էր մնացել: Մուտքը թերեւ 3000 ռուբլու հա-
նի, եթէ հաշուել չը լինեց հաջորդ ծախսերը:
Գեռ մինչև երեկոյին ծախսված էր 1080 ռուբլի:
Կարգադրիչները, ինչպէս երեւում է, առաջնորդ-
վել են այն մտքով, թէ չը պէտք է խնայել
ծախսերը, այլ պէտք է աշխատել շքեղ և հետա-
քրքիր դարձնել, որպէս զի լաւ տպագրութիւն
թողնի, որպէս զի հասարակութիւնը զուարճանայ:
Չը գիտեցէ՞ «հասարակութիւն» ասելով ինչ դա-
սակալք են աչքի առաջ ունեցել մեր կարգա-
դրիչները, միայն այդքանը թափ յայտնի է, որ
այդ տեսակ երեկոյիններ յաճախող հասարակու-
թիւնը միշտ կարողանում է զուարճանալ, «ժա-
մանակ» անցկացնել, այնպէս որ մի առանձին
կարիք չը կար հաջորդ ծախսեր անելու և բա-
րեգործութեան անուան տակ հարկւրներ չուայն-
լու:

Ն. Գ.

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Փետրվարի 12-ին

Տպագրվում է համաձայն ցենզուրական կոմի-
տէի որոշման, գրաքննական կոմիտէի որոշման
139-դ յօդուածի հիման վրա:

Մարիամեան-Յովնանեան օրիորդաց ուսումնա-
րանի առիթով վերջին ժամանակներս «Մշակի»
մի քանի համարներում հրատարակված յօդուած-
ների մէջ ասված է, թէ նրա ներկայ վիճակն ան-
նախանձելի է և թէ այդ հաստատութիւնը իր
խոշոր ծախսերի համեմատ արդեն չէ տալիս:
Այդ, լրագրի կարծիքով, ցատկի երեկոյին պատ-
ճառը վերադարձնում է այնպիսի տեսչի անձին, որ
իբր թէ իր դերում է չլքել: Իրարից իր աննպատ-
կարծիք պ. Փ. Վարդանանի մասին, իբրև տես-
չի, արտայայտվի՝ անուղղակի ստուեր է գցում

և ուսումնարանի հոգաբարձական խորհրդի գոր-
ծունէութեան վրա: Եթէ «Մշակի» ընթերցողը
ծանօթ չը լինի դպրոցի կարգերին, անշուշտ
այն եղանակով խոսեցիկ պիտի գայ, թէ հոգաբար-
ձուները յօժարակամ յանձն առնելով հոգ տանել
այս հաստատութեան կարիքները և բարօրութեան
մասին, դրանով էլ գոհ են մնացել, իրանք ոչինչ
չեն անում և ուսումնարանի ամբողջ կառավա-
րութիւնը լիովին թողնել են տեսչին:

Մի կողմ թողնելով պ. Վարդանանի հասցէին
ուղղած անարժան մեղադրանքները և անտեղի
յարձակումները, որոնք երևի թէ առանձին շար-
ժառիթներ ունեն, մենք պարզեց ենք համարում
Մարիամեան-Յովնանեան դպրոցի իսկական վիճա-
կով հետաքրքրվող անձերին ծանօթութիւն տալու
համար ապացուցանել դրութեան մէջ, որ «Մշակի»
յիշած փաստերը անճշդ են, թանջանները կեղծ են,
հետեւաբար և իր եղանակացութիւնները միանգամայն
անհիմն: Սկսենք ուսումնարանի դրամական մի-
ջոցների հարցից: «Մշակը» անդադար կրկնում
է, թէ դպրոցի վարչութիւնը 20—25 հազար
արաբական եկամուտ ունենալով հանդերձ կա-
րող էր այս ինչ բանն անել, այս ինչ բանն ու-
նենալ և այն, բայց ոչինչ չէ արել: Իսկոյն կը
տեսնենք, որ այդ փաստերը բոլորովին անստույգ
են: Դպրոցի պահպանութեան համար արդեն
մատակարարող քարվաստարան մտել է հոգաբար-
ձական խորհրդի վարչութեան ներքոյ 1888 թ. ա-
կանին 16 հազար ռուբլի տարեկան եկամուտով:
Հոգաբարձութիւնը ջանալով հետզհետէ աճեցնել
այդ եկամուտը, անցաւ 1893 թ. հասցեց հա-
զիւ հազ 20 հազար ռուբլուց մի քիչ պակաս և,
տան հաջորդ տարեկը հիմնովին նորոգելուց յե-
տոյ՝ միայն այս փետրվարի մէկից սկսած կապա-
ւով տուեց շինութիւնը 25,120 ռ.: Այդ 16—20
հազար ռ. ընդհանուր եկամուտ մօտ մի քա-
ռորդը ծախսվում էր քարվաստարանի և դպրոցի
նորոգութեան, քաղաքային հարկերի վճարման,
սպահութեան, կառավարչի վարձատրութեան
համար և այլն: Մի և նոյն գումարից՝ հանգուցեալ
բարերար Յ. Ս. Յովնանեանի բարձրագոյն հաս-
տատված ընծայալից գործութեամբ ամեն տարի
տրվում էր Թիֆլիսի օ. Ստեփաննիսի կուսանա-
ցական և Ախալքալաքի հայոց ուսումնարա-
նին միասին 450 ռ., Լազարեան ձեռնարանում ե-
րեք որդեգիր կրթելու նպատակով 24,000 ռ. (?)
դրամալուրի կազմում: Համար յատկացում էր
տարեկան 4,500 ռ. և վերջապէս ներկայ թա-
կանից սկսած արդիւիս յատկացումներ պէտք է
լինեն և մի առանձին դրամալուրի կազմու-
լու համար, որի տոկոսներով պահելու են դըպ-
րոցում 10 զինչերթիկ սանիկներ: Այս բո-
լոր պարտադիր վճարները և յատուկ դու-
մարները եկամուտի հանելուց յետոյ՝ հոգաբար-
ձական խորհուրդը վերջին վեց տարեկ ընթաց-
քում հնար է գտել ծախսերու դպրոցական
պէտքերի համար տարին 7,700-ից մինչև 11,500
ռ., այսինքն միջին հաշուով տարեկան 10,000 ռ.:
Պարզ է ուրեմն, որ ուսումնարանի ծախսերի հա-
մար իսկապէս ստացված գումարի և «Մշակի»
յիշած 20—25 հազարների մէջ ահագին տարբե-
րութիւն կայ:—Ուսումնարանում այսօր դաստիա-
րակվում են մօտ 270 աշակերտուհի և վարչու-
թիւնը ստիպված է շատերին մերժել՝ տեղ չը լի-
նելու պատճառով: Այդ թիւը 230 ոչ միայն ձրի
են դաստիարակվում, այլ ձրեաբար են տանում
են ամեն տեսակ ուսումնարանական պիտուքը, իսկ
անհնազաւորները (60 հոգի) նաև ձրի նախաճա-
շիկ: Բացի այդ 38—40 թոշակաւոր, որպէս ու-
նեոր ծնողների գաւակներ՝ դպրոցին հիմնադրի
բարձրագոյն հաստատեալ ընծայալից հիման վրա
վճարում են միայն 27 ռ. տարեկան ուսման
վարձ և ստանում են դպրոցից մի և նոյն ու-
սումնական պէտքերը:—Ի նկատի ունենալով, որ
Մարիամեան-Յովնանեան դպրոցը հիմնված է
գլխաւորապէս ամենաչքաւոր դասակարգի աղջիկ-
ների համար և այստեղ մտնում են կամ կողմի
ու անտաշ, կամ երկուսն ու չը դարձեցած երե-
խաներ, որոնց դաստիարակութեան համար մեծ
ջանք և համբերութիւն է պահանջվում ուսուցչա-
կան խմբից, հոգաբարձական խորհուրդը աշխա-
տում է լրացնել այդ խումբը առաւելապէս գիւ-
նադիւսաւոր վարժուհիներով, որոնք՝ ինչպէս
ամեն տեղ աւելի ընդունակ են հանդիսանում
կանանց սեռի դաստիարակութեան գործում,
և միայն մի քանի մասնաւոր աւարկաների համար
հրաւիրում է վարժապետներ:—Թէպէտ ծխական
դպրոցներում աւանդող դասերի վարձատրու-

թեան չափն արդէն որոշված է հոգեւոր իշխանու-
թեան սահմանած կողպաներով, բայց և այնպէս
հոգաբարձական խորհուրդը, նոյն իշխանութեան
գիտութեամբ, վճարում է Մարիամեան-Յովնանեան
ուսումնարանի դասատուներին կողպաներից աւե-
լի մեծ ուժիկ և բացի այդ՝ կամենալով քաջակե-
րել նրանց և աւելի լաւ ոյժեր գրաւել դպրոցի
համար՝ իւրաքանչիւր տասն տարեկայ ծառայու-
թիւնից յետոյ տալիս է նրանց և մի յաւելուա-
ծական ուժիկ: Հետեւաբար Մարիամեան-Յովնա-
նեան դպրոցի ուսուցչական խումբն ընդհանրապէս
աւելի լաւ է վարձատրվում, քան թէ միւս ծխա-
կան դպրոցներին:

Գալով ուսումնարանի դասատուութեան ար-
դիւններին և սանիկներին զարգացման անտիճա-
նին, հոգաբարձական խորհուրդը պնդում է, որ
եկեղեցական ծխական դպրոցների համար սահմա-
նված և պարտադիր ծրագիրը ամենայն հաշիւեալ
և բարեխղճութեամբ է գործադրվում այս ուսում-
նարանի մէջ՝ ուշ դարձնելով մասնաւոր մանուկ-
ների բարձր միջադրին: Մեր ասածի ճշմարտու-
թեան ապացոյց կարող են լինել թէ հոգեւոր իշ-
խանութեան և թէ պետութեան կողմից կարգված
տեսուչները վկայութիւնները, որոնք ստեպ յաճա-
խելով մեր դպրոցը՝ միշտ գոհ են մնացել դրա
կրթական վիճակից, բաւականութիւն և հաւանու-
թիւն են յայտնել ուսումնարանի ղեկավարին և
ուսուցիչներին: Նոյն բանին զօրեղ ապացոյց է և
այն հանգամանքը, որ Մարիամեան-Յովնա-
նեան երկրպետան դպրոցի ընթացաւարտ աշա-
կերտուհիները ուղղակի մտնում են արդուհի
գիմնազիւններ և երկու ուղի և երրորդ դաստիա-
րում, ուր և շատ աշուղ չարունակում են իրանց
ուսումը:

Ի վերջոյ հոգաբարձական խորհուրդը կարե-
ւոր է գտնում յիշեցնել պ. խմբագրին իր սե-
փական խօսքերը «Մշակի» 9-րդ համարից և խնդ-
րում է նրան գործ դնել իր քարոզած գեղեցիկ
սկզբունքը ոչ միայն այն ժամանակ, երբ այդ ի-
րան հանելի է, այլ առանց բացառութեան ամեն
գէտքերում, մասնաւորապէս Մարիամեան-Յովնանեան
ուսումնարանին պէս նշանաւոր բարեգործական
հաստատութեան մասին խօսելիս: Ահա թէ ինչ է
ասում պ. Ա. Քալանթարը «Մշակի» այդ համա-
րում: «Վերջապէս ժամանակ է, որ սկսեք փոքր ի
շատէ լուրջ վերաբերվել դէպի գրականական խօս-
քը, դէպի մի գէղեղ, որ արված է աւելի լաւ գոր-
ծադրութեան համար»:

Անդամը հոգաբարձական խորհուրդանի
Մարիամեան Կատարին Արդութեանց, Յ. խա-
տիսեանց, Միջայել Շահ-Պարտեանց, Գեորգ Աբի-
մեանց, Ստեփաննիս Անանեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Լսում ենք, որ էջմիածնի հոգեւոր բարձր իշ-
խանութիւնը մտադրութեան ունի միասնական
թեմական առաջնորդների որոշման թողնել այն
հարցը, թէ արդե՞ր որ և է անձն արժանաւորու-
թիւն ունի քահանայ ձեռնադրվելու թէ ոչ, և
դրա հետ միասին ձեռնադրութեան վերաբերեալ
կարգադրութիւններ անելը:

Գարունը մօտենում է, և այդ առիթով խոր-
հուրդ ենք տալիս կողմնակցական Գիւղատեսուհական
ընկերութեան հրատարակել մեր երկրի շերտա-
պահների համար տեղեկութիւններ, թէ որտեղ
են ծախվում շերտի տառով սերմեր, և որ քիւր-
մայի սերմը աւելի ապահով է: Այդ անհրաժեշտ
է մասնաւոր այն պատճառով, որ սերմի առե-
տուրով պարագայ շատ վաճառականներ խաբում
են ժողովրդին, չը ընկած և չը փորձված սեր-
մեր բաժանելով մեր երկրում: Միակ հիմնաւոր-
ութիւնը, որ համեմատաբար ամենից մեծ հեղի-
նակութիւն կարող է ունենալ այդ հարցում,—
դա Գիւղատեսուհական ընկերութիւնն է:

Մեկ հարցըրում են, որ ներկայումս Եւրոպա-
րիայում արքան հայ ուսանողներ և ուսանողու-
հիներ կան, որքան շատ տարիներէ ի վեր չեն
եղել:

Հեռագիրն արդէն հաղորդեց, որ նորեւս վախ-
ճանված հրապարակախօս Գալոբեյրովի եղբայրը,
որը ստանձնել էր «Եւրոպայի»-ի ժամանակաւոր
խմբագրի պաշտօնը, թունաւորվել է: Այժմ Պե-
տերբուրգի լրագրիները այդ մասին հաղորդում են
հետեւեալ մանրամասնութիւնները. «Այսօր, առաւօ-

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 225.